ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

7 դեկտեմբերի 2012 թվականի թիվ 6/14 քաղ. Ալմաթի

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՔՍԱՅԻՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԱՐԿՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԻ ՄԱՍԻՆ

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիան *որոշեց*՝

Ռուսաստանի ԴՄԾ-ին, Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ին և Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ին՝ ղեկավարվել մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից մաքսային փորձաքննության ուղարկվող ապրանքների փաստաթղթերի ցանկով (կցվում է):

Նախագահ՝ **Ա. Յու. Բելյանինով**
Նախագահի տեղակալ՝ **Մ. Տ. Յեսենբաև**
Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ի նախագահի տեղակալ, Միավորված կոլեգիայի անդամ՝ **Ս.Վ. Բորիսյուկ**

Հավելված
Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի թիվ 6/14 որոշման

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՔՍԱՅԻՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԱՐԿՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ

1. Ներկայացվող փաստաթղթերի մատնանշմամբ ուղեկցող նամակը, էջերի քանակը (անհրաժեշտության դեպքում):
2. Մաքսային փորձաքննություն նշանակելու մասին որոշումը, բնօրինակը:
3. Ապրանքի փորձանմուշների և նմուշների ընտրության ակտը, բնօրինակը՝ ըստ «Մաքսային փաստաթղթերի ձևերի մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 20-ի թիվ 260 որոշման մեջ շարադրված ձևի:
4. Ապրանքների մասին հայտարարագրի պատճենը՝ ըստ «Մաքսային հայտարարագրերի լրացման ցուցումների և մաքսային հայտարարագրերի ձևերի մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 20-ի թիվ 257 որոշման մեջ շարադրված ձևի:
5. Առևտրային փաստաթղթերի պատճենները (հաշիվ-ապրանքագրեր (ինվոյս), պայմանագիր, մասնագրեր, բեռնառաքման և փաթեթավորման թերթիկներ):
6. Ապրանքի ծագման, համապատասխանության և որակի սերտիֆիկատների (որակի սերտիֆիկատ, անվտանգության (որակի) անձնագիր, վերլուծության սերտիֆիկատ, որակի հավաստագիր կամ պատրաստողի նամակներ)՝ օրենսդրությանը համապատասխան հաստատված պատճենները:
7. Բնօրինակի հիման վրա պատրաստված արտադրատեսակի տեխնիկական անձնագրի և դրա թարգմանության պատճենները:
8. Բացթողնվող արտադրանքի (ապրանքի) տեխնիկական պայմանները (կանոնակարգ) կամ ձեռնարկության ստանդարտը:
9. Գծագրերի, հավաքման սխեմաների պատճենները, ապրանքի հիմնական տեխնիկական առևտրային բնութագրերը:
10. Սեղմասկավառակի վրա վիդեոֆիլմը (առկայության դեպքում), ապրանքի (այդ թվում՝ պիտակների, ապրանքի վրա գրառումների) լուսանկարները:
11. Այլ փաստաթղթեր: